


20000 դրամ անվանական արժեքով թղթադրամ



Թղթադրամի վրա պատկերված է **Հովհաննես Այվազովսկին** (1817-1900), աշխարհահռչակ հայազգի նկարիչ: Համարվում է բոլոր ժամանակների ամենամեծ ծովանկարիչներից մեկը: Ստեղծել է շուրջ 6000 կտավ, որոնք պահվում են աշխարհի նշանավոր թանգարաններում և մասնավոր հավաքածուներում:



## Պաշտպանական հատկանիշներ

### Հումք

Թղթադրամը տպագրված է Hybrid™ բարձրորակ կոմպոզիտային հումքի վրա, որը բամբակե թուղթ է, երկու կողմերից պատված պոլիէսթերի շերտով:

### 1. Ջրանիշ

- Թղթադրամի վրա ներկայացված անձի դիմապատկերն արտացոլող բազմերանգ ջրանիշ,
- Թղթադրամի անվանական արժեքն արտահայտող երկերանգ ջրանիշ:




### 2. Թափանցիկ պատուհան

Ձևավորման տարրի հստակ պատկերով թափանցիկ պատուհան:




### 3. Պաշտպանական մանրաթելեր

Թղթադրամի հումքի մեջ ներառված են տեսանելի և անտեսանելի (ուլտրամանուշակագույն լույսի ներքո լուսածորող) մանրաթելեր:



#### 4. Պաշտպանական ներգիծ

Պատուհանաձև պաշտպանական ներգիծ՝ գունափոխման հատկանիշով. պարունակում է «լողացող» 3D վառ պատկերներ անկյունակների տեսքով, ՀՀ դրամի գրանշանի պատկերը և անվանական արժեքն արտահայտող թվի ապամետաղականացված գրառումը:



#### 5. Խոր տպագրություն

Թղթադրամի դիմերեսին որոշ պատկերներ տպագրված են խոր տպագրության եղանակով՝ ունեն բարձր մակերես և հստակ շոշափվում են.

- դիմանկարը,
- դիմանկարի շուրջ պատկերները,
- թղթադրամի անվանական արժեքն արտահայտող թվանշանները,
- թղթադրամի անվանական արժեքն արտահայտող բառերը,
- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումը,
- Տկարատեսների համար նախատեսված հատկանիշը:



#### 6. Անհատական համարանիշ

Տեղադրված է թղթադրամի դիմերեսի ձախ և աջ հատվածներում. բաղկացած է սև գույնով տպագրված երկու տառից (թղթադրամի սերիան) և ութ թվանշանից (թղթադրամի համարը).

- ձախ հատվածում գտնվող համարանիշը ուղղահայաց է,
- աջ հատվածում գտնվող համարանիշը հորիզոնական է:



## 7. Օպտիկապես փոփոխական ներկ

Օպտիկապես փոփոխական ներկով է տպագրված թղթադրամի դիմերեսի պաշտպանական հատկանիշը, որն ունի շրջանակի տեսք և պարունակում է 2-րդ կետում ներկայացված ձևավորման տարրը կրկնող և հորիզոնական «լողացող» 3D վառ տարրեր:



## 8. Մանրատառաչար և մանրապատկերներ

Թղթադրամի դիմերեսին և դարձերեսին առկա են մանրատառաչար և մանրապատկերներ, որոնք տեսանելի են միայն խոշորացույցով.

### Դիմերես


մանրատառաչար, որը բաղկացած է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումից և անվանական արժեքից՝ թվային և տառային արտահայտությամբ,

- մանրապատկերներ, որոնք կրկնում են 2-րդ կետում ներկայացված ձևավորման տարրը,

### Դարձերես


- հորիզոնական մանրատառաչար, որը բաղկացած է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումից և անվանական արժեքից՝ թվային և տառային արտահայտությամբ,

- մանրատառաչար, որը կազմված է թղթադրամի վրա ներկայացված անձի անուն-ազգանունից,
- մանրապատկերներ, որոնք կրկնում են 2-րդ կետում ներկայացված ձևավորման տարրը:



## 9. Երկգույն մարգարտափայլ տպագրություն

Թղթադրամի դարձերեսին առկա է երկգույն մարգարտափայլ ժապավեն:



## 10. Ուլտրամանուշակագույն հատկանիշ

Թղթադրամի դիմերեսին և դարձերեսին առկա են լուսածորող ներկով տպագրված մասեր, որոնք տեսանելի են միայն ուլտրամանուշակագույն լույսի ներքո.

Դիմերես

- անվանական արժեքն արտահայտող թիվը,
- ձևավորման տարրը,
- անհատական համարանիշը,

Դարձերես

- հուշարձանը,
- հետին պլանը:

